

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Գլոբուսի վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Քարտեզների հետ համեմատած, գլոբուսների վրա աղավաղումներն ավելի շատ են:
- 2) Գլոբուսների վրա բոլոր միջօրեականների երկարությունները հավասար են:
- 3) Բոլոր անկյունները հավասար են բնության մեջ եղած իրական անկյուններին:
- 4) Ցանկացած երկու գուգահեռականների միջև եղած հեռավորությունները հավասար են:

2

Բնական ռեսուրսների ընդհանուր պաշարների քանակի և օգտագործման չափերի հարաբերությունը կոչվում է.

- 1) բնական ռեսուրսների կադաստր
- 2) ռեսուրսապահովվածություն
- 3) բնառեսուրսային ներուժ
- 4) ռեսուրսի տնտեսական գնահատում

3

Ստորև թվարկված պլատֆորմներից ո՞րոնք են առաջացել Գոնդվանայի մասնատումից:

- 1) Միբիրական և Արաբական
- 2) Հյուսիսամերիկյան և Հարավամերիկյան
- 3) Չինական և Հնդկական
- 4) Ավստրալական և Անտարկտիկական

4

Տրված գետերից ո՞րն է թափվում Ատլանտյան օվկիանոս:

- 1) Նեղոսը
- 2) Զամբեզին
- 3) Շարին
- 4) Լիմպոպոն

5

Ինչպե՞ս են կոչվում տափաստանները Հարավային Ամերիկայում:

- 1) սելվաս
- 2) կամպոս
- 3) լյանոս
- 4) պամպա

6

Ըստ տևողության միգրացաները լինում են.

- 1) կազմակերպված
- 2) մշտական
- 3) հարկադիր
- 4) կամավոր

7

Այս ռասայի ներկայացուցիչները առանձնանում են մուգ մաշկի գույնով, հաստ շուրթերով, լայնանիստ քթով, զարգացած մազաձածկույթով:
Ո՞ր ռասայի մասին է խոսքը:

- 1) Եվրոպեոիդ
- 2) ավստրալոիդ
- 3) նեգրոիդ
- 4) մոնղոլոիդ

8

Ո՞ր գետի վրա է գտնվում «Երեք կիրճ» ջրէկ-ը:

- 1) Լենա
- 2) Յանցզի
- 3) Պարանա
- 4) Ենիսեյ

9

Ո՞ր տարածաշրջանում է գտնվում Ֆրանսիան:

- 1) Հյուսիսային Եվրոպա
- 2) Արևմտյան Եվրոպա
- 3) Հարավային Եվրոպա
- 4) Արևելյան Եվրոպա

10

Ո՞ր երկրում է առանձնահատուկ բարձր զարգացում ստացել ծաղկաբուծությունը:

- 1) Նորվեգիա
- 2) Ֆինլանդիա
- 3) Նիդեռլանդներ
- 4) Ֆրանսիա

11

Տրվածներից ո՞րը չի համարվում բնական աշխարհագրության ճյուղ:

- 1) տնտեսական աշխարհագրությունը
- 2) երկրաձևաբանությունը
- 3) հողերի աշխարհագրությունը
- 4) կենսաաշխարհագրությունը

12

Տրված գործոններից ո՞րը չի համարվում կլիմայաստեղծ Հայկական լեռնաշխարհի համար:

- 1) Գոբի և Տակլա Մական անապատների մոտիկությունը
- 2) մակերևույթի լեռնային բնույթը
- 3) Միջերկրական և Կասպից ծովերի մոտիկությունը
- 4) մթնոլորտի շրջանառության առանձնահատկությունները

13 Ձույզերով տրվածներից որո՞նք են պղնձահրաքարային հանքավայրեր:

- 1) Սվարանցի և Հրազդանի
- 2) Ալավերդին և Կապանը
- 3) Սոթքը և Մեղրաձորը
- 4) Փամբակի և Շվանիձորի

14 ՀՀ մարզ – մարզկենտրոն գույզերից ընտրել *սխալը*:

- 1) Սյունիք Կապան
- 2) Լոռի – Վանաձոր
- 3) Շիրակ – Գյումրի
- 4) Արարատ – Արարատ

15 ՀՀ ո՞ր մարզում է գտնվում Պարզ լիճը:

- 1) Գեղարքունիք
- 2) Լոռի
- 3) Տավուշ
- 4) Վայոց ձոր

16 «Պետություն-մայրաքաղաք» համապատասխանեցումներից ո՞ր շարքն է ճիշտ.

- | | |
|---------------|--------------------|
| ա) Ինդոնեզիա | 1) Մանիլա |
| բ) Ֆիլիպիններ | 2) Կուալա Լումպուր |
| գ) Մալայզիա | 3) Բանկոկ |
| դ) Թայլանդ | 4) Ջակարտա |

- 1) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 2) դ-1, ա-2, բ-3, գ-4
- 3) բ-2, ա-3, գ-4, դ-1
- 4) գ-1, բ-2, ա-3, դ-4

17 Ո՞ր մայրցամաքում է գտնվում աշխարհի ամենաբարձր ջրվեժը:

- 1) Հարավային Ամերիկա
- 2) Աֆրիկա
- 3) Հյուսիսային Ամերիկա
- 4) Ավստրալիա

18

Ծնելիության և մահացության հետևանքով բնակչության սերունդների նորացման և հերթափոխման գործընթացը անվանում են.

- 1) բնակչության միջին խտություն
- 2) բնակչության վերարտադրություն
- 3) բնակչության միգրացիա
- 4) բնակչության տարաբնակեցում

19

Տրված պնդումներից ո՞րը բնորոշ չէ համամոլորակային հիմնախնդիրներին:

- 1) Կարող են լուծվել ամբողջ մարդկության ջանքերով և բոլոր երկրների մասնակցությամբ:
- 2) Համամոլորակային հիմնախնդիրները վերաբերում են թե՛ ամբողջ մարդկությանը, թե՛ յուրաքանչյուր մարդու:
- 3) Այս հիմնախնդիրներին բնորոշ է սերտ փոխկապակցվածությունը և փոխապայմանավորվածությունը:
- 4) Այս հիմնախնդիրները ոչ մի հետևանք չեն թողնում տնտեսության զարգացման վրա:

20

Ջուլգերով տրված մշակաբույսերից ո՞րոնք են թելատու տեխնիկական:

- 1) սուրճ և կակաոն
- 2) արևածաղիկը և սոյան
- 3) բրինձը և եգիպտացորենը
- 4) ջութը և սիսալը

21

Ո՞րը չի համարվում Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալ:

- 1) երկաթուղային և ծովային տրանսպորտի զարգացումը
- 2) համաշխարհային շուկան
- 3) խոշոր մեքենայական արտադրությունը
- 4) բնակչության ցածր բնական աճը

22

Տրված հողատիպերից ո՞րը չի համարվում գյուղատնտեսական հողահանդակ:

- 1) բազմամյա տնկարկները
- 2) վարելահողերը
- 3) արոտավայրերը
- 4) կմախքային հողերը

23

Հորիզոնի n° կողմի հետ է համընկնում 90° ազիմուտը:

- 1) արևմուտք
- 2) հյուսիս
- 3) հարավ
- 4) արևելք

24

Բնութագրումով որոշել պետությունը:

Այս պետությունը «Մեծ յոթնյակի» անդամներից է, որը ելք ունի դեպի Միջերկրական ծով: Տարածքը կազմված է մայրցամաքային, թերակղզային և կղզային մասերից: Տնտեսության մեջ հատկապես մեծ է «Ֆիատ», «Ֆերրարի», «Օլիվետի» խոշոր վերագգային ընկերությունների դերը:

- 1) Պորտուգալիա
- 2) Իսպանիա
- 3) Հունաստան
- 4) Իտալիա

25

Տրված պետություններից n° ըր հարուստ չէ վառելիքային օգտակար հանածոներով:

- 1) Սաուդյան Արաբիա
- 2) Իրան
- 3) Թուրքիա
- 4) Ադրբեջան


26

Տրված պնդումներից n° ըն է ճիշտ:

- 1) Բնական միջավայրի ներկայիս վատթարացման հիմնական և առավել վտանգավոր պատճառը բնածին աղտոտումն է:
- 2) Աղմուկը, փոշոտվածությունը և կենցաղային թափոնները համարվում են ֆիզիկական աղտոտում:
- 3) Հեղուկ ածխաջրերի, ծծմբի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների թափանցումը շրջակա միջավայր չեն առաջացնում քիմիական աղտոտում:
- 4) Մնկերը, Բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները աղտոտում չեն առաջացնում:

27 Քարտեզ 1-ում ո՞ր մարզն է նշված Ե տառով:

- 1) Տավուշի
- 2) Գեղարքունիքի
- 3) Կոտայքի
- 4) Արագածոտնի



Քարտեզ 1

28 Ո՞ր լեռներն են նշված Դ տառով քարտեզ 1-ում:

- 1) Զանգեզուրի
- 2) Ուրծի
- 3) Վայքի
- 4) Երանոսի

29 Քարտեզ 2-ում *Բ* տառով նշված լեռներն են նշված:

- 1) Դրակոնյան
- 2) Կապի
- 3) Ատլասի
- 4) Ալպյան

30 Քարտեզ 2-ում *Գ* տառով նշված ջրվեժն է նշված:

- 1) Անիսել
- 2) Վիկտորիա
- 3) Նիագարա
- 4) Իգուասու



Քարտեզ 2

31 Բնութագրումով որոշել Աֆրիկայում տարածվող կլիմայական գոտին:

Այս կլիմայական գոտին տարածվում է Գվինեական ծովածոցի ափերին և Կոնգոյի իջվածքում: Ամբողջ տարին տիրապետում են տաք և խոնավ օդային զանգվածները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +25°-ից +27°:

- 1) արկտիկական
- 2) արևադարձային
- 3) հասարակածային
- 4) բարեխառն

32 Երկրի հասարակածային շառավիղի երկարությունը կազմում է մոտ.

- 1) 6375 կմ
- 2) 6357 կմ
- 3) 6371 կմ
- 4) 6378 կմ

33 Ինչպե՞ս է կոչվում տարբեր քարտեզներից կազմված գիրքը:

- 1) տեղագրական քարտեզ
- 2) գլոբուս
- 3) ուրվագծային քարտեզ
- 4) ատլաս

34 Տրված պետություններից ո՞րը չի եղել ԽՍՀՄ կազմում:

- 1) Հայաստան
- 2) Ադրբեջան
- 3) Թուրքիա
- 4) Վրաստան

35 Ո՞ր երկրներին է բնորոշ «ժողովրդագրական պայթյունը»:

- 1) Ֆրանսիային և Իտալիային
- 2) Ճապոնիային և Գերմանիային
- 3) Կանադային և Մեծ Բրիտանիային
- 4) Պակիստանին և Նիգերային

36 Տրված կրոններից ո՞րը համաշխարհային չէ:

- 1) բուդայականություն
- 2) քրիստոնեություն
- 3) հուդայականություն
- 4) մահմեդականություն

37

Յուրաքանչյուր երկրում մարդկային գործունեության բնագավառների պատմականորեն ձևավորված համակարգը կոչվում է.

- 1) տնտեսական միասնացում
- 2) ազգային տնտեսություն
- 3) աշխատանքի բաժանում
- 4) համաշխարհային տնտեսություն

38

Տրված գյուղատնտեսական մշակաբույսերից ո՞րը չի համարվում առույգացնող:

- 1) սոյա
- 2) սուրճ
- 3) թեյ
- 4) կակաո

39

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Աֆրիկայի հարավային ափերի մոտ են գտնվում Կանարյան կղզիները:
- 2) Աֆրիկայի ափերը խիստ մասնատված են:
- 3) Աֆրիկայի ափերի մոտ գտնվող խոշոր կղզի է Մադագասկարը:
- 4) Աֆրիկայի արևելյան ափերը ողողում են Ատլանտյան օվկիանոսի ջրերը:

40

Ո՞ր պնդումը բնորոշ չէ Ճապոնիային:

- 1) Ներքին բեռնափոխադրումներում մեծ է երկաթուղային տրանսպորտի դերը:
- 2) Ճապոնիան թերակղզային պետություն է:
- 3) Ճապոնիային բնորոշ է բնակչության ցածր բնական աճը:
- 4) Ճապոնիան գտնվում է տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլում:

41

«Լեռնաշղթա — լեռնագագաթ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Գուգարաց – Մուրղուզ
- 2) Ուրծի – Թեժ լեռ
- 3) Միափորի – Քաշաթաղ
- 4) Վայքի – Գոգի

42

Ո՞ր մարզի տարածքում է գտնվում Շիկահողի արգելոցը:

- 1) Տավուշի
- 2) Արարատի
- 3) Սյունիքի
- 4) Վայոց Ձորի

- 43) Ո՞ր ռեսուրսի ճիշտ օգտագործման դեպքում ոչ միայն այն չի սպառվում, այլ անընդհատ բարելավվում, բարձրացնում է իր որակը:
- 1) նավթ
 - 2) երկաթաքար
 - 3) հող
 - 4) այրվող թերթաքար
- 44) Բնության հատուկ պահպանող տարածքներից ամենախիստ կարգավիճակն ունի.
- 1) բնության հուշարձանը
 - 2) արգելոցը
 - 3) արգելավայրը
 - 4) ազգային պարկը
- 45) Երևան քաղաքի օդային ավազանն առավելապես աղտոտող աղբյուր է հանդիսանում.
- 1) ավտոմոբիլային տրանսպորտը
 - 2) մեքենաշինությունը
 - 3) քիմիական արդյունաբերությունը
 - 4) նավթաքիմիան
- 46) Հատակագծի կամ քարտեզի վրա կոտորակի ձևով գրված մասշտաբը, որի համարիչը միշտ 1 է, կոչվում է.
- 1) պայմանական
 - 2) գծային
 - 3) անվանական
 - 4) թվային
- 47) Պարենային հիմնախնդրի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:
- 1) ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը զբաղվում է բնակչության բնական աճի կարգավորման խնդիրներով:
 - 2) Պարենային հիմնախնդիրը չի ազդում հասարակական կյանքի այլ ոլորտների վրա:
 - 3) Մեկ մարդուն օրական միջին հաշով անհրաժեշտ է ոչ պակաս, քան 2400-2600 կկալ պարունակող բազմապիսի սնունդ:
 - 4) Պարենային հիմնախնդիր գոյություն ունի միայն արդյունաբերական երկրներում:
- 48) Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 6000 կմ է, իսկ քարտեզում՝ 20 սմ: Որքա՞ն կլինի քարտեզի մասշտաբը:
- 1) 1:3000
 - 2) 1:30 000 000
 - 3) 1:300 000
 - 4) 1:30 000

49 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Բոլոր միջօրեականներն իրար հավասար են:
- 2) Գրինվիչի միջօրեականը ամենաերկարն է:
- 3) Ամսաթվի փոփոխման գիծը արլ. ե. 150° միջօրեականն է:
- 4) Միջօրեականի 10° աղեղի երկարությունը հավասար 115 կմ-ի:

50 Որքա՞ն է տևում Երկրի մեկ պտույտն իր առանցքի շուրջ:

- 1) 48 ժամ
- 2) 1 ժամ
- 3) 6 ժամ
- 4) 24 ժամ

51 Տրվածներից ո՞ր ապարն ունի հրային ծագում:

- 1) քարածուխը
- 2) տորֆ
- 3) գրանիտը
- 4) կրաքարը

52 Երկրաբանական ո՞ր դարաշրջանում է ձևավորվել մարդը:

- 1) Պրոտերոզոյան
- 2) Արխեյան
- 3) Մեզոզոյան
- 4) Կայնոզոյան

53 Բնութագրումով որոշել ծովը:

Այս ծովը ողողում է միաժամանակ երեք աշխարհամասերի ակերը և համարվում է Ատլանտյան օվկիանոսի մաս: Ո՞ր ծովի մասին է խոսքը:

- 1) Բարենցի
- 2) Կարիբյան
- 3) Միջերկրական
- 4) Բալթիկ

54 Տրված մեգալոպոլիսներից ո՞րը ԱՄՆ-ում չէ:

- 1) Բոսվաշ
- 2) Չիփիթս
- 3) Տոկայո
- 4) Սան-Սան

55 Տրված երկրներից ո՞րն է ԵՄ անդամ:

- 1) Ֆրանսիա
- 2) Մեծ Բրիտանիա
- 3) Շվեյցարիա
- 4) Թուրքիա

56 Դուրս գրել այն քաղաքների համարները, որոնք Գեղարքունիքի մարզում են:

- | | |
|-------------|-------------|
| 1) Հրազդան | 5) Աբովյան |
| 2) Գավառ | 6) Իջևան |
| 3) Դիլիջան | 7) Սևան |
| 4) Մարտունի | 8) Վարդենիս |

57 Դուրս գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս:

- | | |
|------------|-----------|
| 1) Ինդոս | 5) Ենիսեյ |
| 2) Գանգես | 6) Ամուր |
| 3) Հուանհե | 7) Լենա |
| 4) Վոլգա | 8) Դանուբ |

58 Դուրս գրել պետական վարչատարածքային կառավարման դաշնային ձև ունեցող երկրները:

- | | |
|--------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Բրազիլիա |
| 2) Իտալիա | 6) Ֆրանսիա |
| 3) Գերմանիա | 7) Հայաստան |
| 4) Կանադա | 8) Թուրքիա |

59 Դուրս գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները:

- | | |
|------------|--------------|
| 1) Արալյան | 5) Աթաբասկա |
| 2) Չադ | 6) Մեծ Արջի |
| 3) Նյասա | 7) Լադոգա |
| 4) Բայկալ | 8) Տանգանիկա |

60 Դուրս գրել հացահատիկային մշակաբույսերի համարները:

- | | |
|--------------|-------------|
| 1) բամբակենի | 5) թեյ |
| 2) ցորեն | 6) վուշ |
| 3) գարի | 7) կակաո |
| 4) բրինձ | 8) ծիրանենի |

61

Դուրս գրել այն երկրների համարները, որոնք գտնվում են Արևելյան Ասիա տարածաշրջանում:

- | | |
|--------------|--------------|
| 1) Մոդոլիա | 5) Իրան |
| 2) Հնդկաստան | 6) Բանգլադեշ |
| 3) Չինաստան | 7) Ինդոնեզիա |
| 4) Ճապոնիա | 8) Ղազախստան |

62

ՀՀ քաղաքները դասավորել ըստ հարավից հյուսիս հաջորդականության:

- 1) Հրազդան 2) Ջերմուկ 3) Ալավերդի

63

Գրել այն ջրային օբյեկտների հաջորդականությունը, որն անհրաժեշտ է անցնել Ատլանտյան օվկիանոսից Հնդկական ամենակարճ ուղիով գնալու դեպքում:

- 1) Ջիբրալթարի նեղուց
2) Սուեզի ջրանցք
3) Միջերկրական ծով
4) Կարմիր ծով

64

Երկրի բնակչության թիվը 50 մլն մարդ է, գյուղաբնակների բացարձակ թիվը 32 մլն մարդ է: Հաշվել ուրբանիզացման մակարդակը:

65

Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 80 000 կմ է, երկրի տարածքը՝ 20 000 կմ² է: Հաշվել տրանսպորտային ցանցի միջին խտությունը:

66

Բնակավայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. $35,5^\circ$ և արլ.ե. 100° :
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը հունիսի 22-ի կեսօրին:

67

Լեռան ստորոտում օդի ջերմաստիճանը 10° է, իսկ լեռան գագաթին՝ -14° է:
Հաշվել լեռան հարաբերական բարձրությունը (հաշվարկը կատարել 6° -ով):

68

Երկու բնակավայրեր գտնվում են հասարակածի վրա, մեկը արլ.ե. 50° , իսկ
մյուսը՝ արմ.ե. 25° վրա: Որոշել երկու քաղաքների միջև եղած ամենակարճ
հեռավորությունը կիլոմետրերով:

69

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:

- 1) Երկրի գնդաձևությունը ոչ մի հետևանք չի թողնում ջերմային գոտիների առաջացման վրա:
- 2) Տվյալ պահին միջօրեականի վրա դիտված ժամանակը կոչվում է տեղական ժամանակ:
- 3) Երկիրն իր առանցքի շուրջը մեկ լրիվ պտույտ է կատարում 365 օրում:
- 4) Երկրի գնդաձևության և օրական պտույտի հետևանքով առաջանում է գիշերվա և ցերեկվա հերթափոխություն:
- 5) Ամսաթվի փոփոխման միջազգային գիծը անցնում է 0° միջօրեականով:
- 6) Երկիրը Արեգակից գտնվում է 150 մլն կմ հեռավորության վրա:

70

Սյունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:

- 1) Գորիսը քաղաք է եղել դեռևս ցարական իշխանության օրոք:
- 2) Մարզը հյուսիսից սահմանակցում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ:
- 3) Մարզի նշանավոր գետերից են Որոտանը, Ողջին և Մեղրիգետը:
- 4) Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի արգելոցը:
- 5) Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ խոշորագույն ձեռնարկություններից է:
- 6) Մարզի զբոսաշրջության զարգացմանը նպաստում է աշխարհի ամենատեղաբար «Տաթևեր» ճոպանուղին: